ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ БЮЛЛЕТЕНЬ

№ 4

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
զետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2013 թվականի ապրիլի 25-ից

Երևան ■ 2013 ■ Ереван

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՏԵՐ 4, 62
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 6, 64

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ 10, 67
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 12, 69

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ 13, 70
Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին 15, 72

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 16
Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին 18
Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին 53

ՑՈՒՑԻՉՆԵՐ 55

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 57

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ 73

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-267 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

Internet: www.aipa.am
E-mail: armpat@aipa.am

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....4, 62
Сведения о выданных патентах.....6, 64

ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....10, 67
Сведения о выданных патентах.....12, 69

ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ..... 13, 70
Сведения о зарегистрированных
промышленных образцзх.....15, 72

ТОВАРНЫЕ ЗНАКИ.....16
Сведения о зарегистрированных
товарных знаках и знаках обслуживания 18
Сведения о продлении действия
регистрации товарных знаков.....53

УКАЗАТЕЛИ.....55

СООБЩЕНИЯ.....57

ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....73

CONTENTS

INVENTIONS.....4, 62
Information on granted patents.....6, 64

UTILITY MODELS.....10, 67
Information on granted patents.....12, 69

INDUSTRIAL DESIGNS..... 13, 70
Information on registered
industrial designs.....15, 72

TRADE MARKS.....16
Information on registered trade
marks and service marks 18
Information on renewal of effect
of trademark registration 53

INDEXES.....55

REPORTS.....57

TWO-LETTER CODES.....73

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	*արտոնագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը* *A գյուտի արտոնագիր* *B արտոնագրաունակության մասին եզրակացություն*
21	*հայտի համարը*
22	*հայտի ներկայացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
31	*առաջին հայտի համարը*
32	*առաջին հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
45	*գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
51	*միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
54	*գյուտի անվանումը*
56	*տեղեկատվության աղբյուրներ*
57	*գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
62	*ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
71	*հայտատուն, երկրի կոդը*
72	*գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
73	*արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*
85	*միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
86	*միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
87	*միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2013.01) A01K 47/00** (11) **2731** (13) **A**
(21) **AM20110139** (22) **13.10.2011**
(71) Թելման Աղաջանի Նազարյան (AM), Արմեն Թելմանի Նազարյան (AM)
(72) Թելման Աղաջանի Նազարյան (AM), Արմեն Թելմանի Նազարյան (AM)
(73) Թելման Աղաջանի Նազարյան, 0086, Երևան, Շիրակի փող. 4-րդ նրբ. 5, բն. 1 (AM), Արմեն Նազարյան, 0086, Երևան, Շիրակի փող. 4-րդ նրբ. 5, բն. 1 (AM)
(54) **Բոռաբուծության եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է մեղվաբուծությանը, մասնավորապես՝ բոռաբուծությանը:

Բոռաբուծության եղանակում բոռերն ստանում են բոռաբջիջներում մեղվամոր ձվադրման միջոցով: Համաձայն գյուտի, մեղվամոր ձվադրման համար նախօրոք պատրաստում են միայն բոռաբջիջներ պարունակող առանձին մոմաթերթեր և դրանք տեղադրում են փեթակում: Գյուտի կիրառումը հնարավորություն է տալիս առանց քիմիական բուժանյութերի և շատ պարզ եղանակով բուժել շատ տարածված վարոատոզ հիվանդությունը:

Բարձրացվում է մեղվաընտանիքի կենսագործունեության արդյունավետությունը, ապահովվում է բոռերի բուծումը:

---

(51) **(2013.01) A01K 47/00** (11) **2732** (13) **A**
(21) **AM20110138** (22) **13.10.2011**
(71) Թելման Աղաջանի Նազարյան (AM), Արմեն Թելմանի Նազարյան (AM)
(72) Թելման Աղաջանի Նազարյան (AM), Արմեն Թելմանի Նազարյան (AM)
(73) Թելման Աղաջանի Նազարյան, 0086, Երևան, Շիրակի փող. 4-րդ նրբ. 5,բն. 1 (AM), Արմեն Թելմանի Նազարյան, 0086, Երևան, Շիրակի փող. 4-րդ նրբ. 5, բն. 1 (AM)
(54) **Մեղվաընտանիքի խնամքի եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է մեղվաբուծությանը, մասնավորապես՝ մեղվաընտանիքի խնամքին:

Գյուտը թույլ է տալիս կարգավորել մեղվաընտանիքում աշխատավոր մեղուների, բոռերի և մայրերի ստացումն ու քանակը:

Մայրերի ստացման համար՝ մոմաթերթի մայրերի համար նախատեսված բջիջներում տեղադրում են բոռաբջիջներում կամ աշխատավոր մեղուների համար նախատեսված բջիջներում մեղվամոր դրած ձուն, բոռերի ստացման համար՝ մոմաթերթի բոռաբջիջներում տեղադրում են մայրերի կամ աշխատավոր մեղուների համար նախատեսված բջիջներում մեղվամոր դրած ձուն, իսկ աշխատավոր մեղուների ստացման համար՝ մոմաթերթի աշխատավոր մեղուների համար նախատեսված բջիջներում տեղադրում են բոռաբջիջներում կամ մայրերի համար նախատեսված բջիջներում մեղվամոր դրած ձուն:

Բարձրացվում է մեղվաընտանիքի խնամքի արդյունավետությունը և ապահովվում է մեղվաընտանիքի կենսագործունեության արդյունավետությունը:

---

(51) **(2013.01) A61B 17/00** (11) **2733** (13) **A**
(21) **AM20120100** (22) **11.07.2012**
(71) Մեհրդադ Ռոսթամպուր (AM)
(72) Մեհրդադ Ռոսթամպուր (AM)
(73) Մեհրդադ Ռոսթամպուր, 0014, Երևան, Դավիթ Անհաղթի 9, բն. 8 (AM)
(54) **Վիրաբուժական ունելի**
(57) Մկրատաձև ունելիի յուրաքանչյուր աշխատանքային մասն ունի կտրող եզր: Յուրաքանչյուր աշխատանքային մասի ծայրին լրացուցիչ ամրակցված է օղակ: Օղակները տեղակայված են դեմ հանդիման, ընդ որում, օղակներից մեկն ունի դեպի ներս ուղղված M-աձև ելուստ: Յուրաքանչյուր օղակի ներքին կողմից՝ շրջանագծի հակադիր կողմերում կատարված են սղոցաձև ատամներ:

Ընդլայնվում են ունելիի ֆունկցիոնալ հնարավորությունները, կրճատվում է վիրահատությունների տևողությունը, 2 նկ.:

---

(51) **(2013.01)** (11) **2734** (13) **A**
A61K 9/00
(21) **AM20120181** (22) **27.12.2012**
(71) Նարինե Մարտինի Գրիգորյան (AM), Ստեփան Սամվելի Հարությունյան (AM)
(72) Նարինե Մարտինի Գրիգորյան (AM), Ստեփան Սամվելի Հարությունյան (AM)
(73) Նարինե Մարտինի Գրիգորյան, 0078, Երևան, Շինարարների 10/1, բն. 132 (AM), Ստեփան Սամվելի Հարությունյան, 0078, Երևան, Շինարարների 10/1, բն. 132 (AM)
(54) **Այրվածքների բուժման դեղագործական բաղադրանյութ**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ այրվածքների բուժման դեղագործական բաղադրանյութի բաղադրակազմին:

Բաղադրանյութը ներառում է հետևյալ բաղադրամասերը, զանգվ. %. ճարպային սոլիդոլ՝ 75.0-85.0, պարաֆին՝ 10.0- 15.0, մեղրամոմ՝ 2.0-5.0 և ձիթայուղ՝ 3.0-5.0: Բաղադրանյութը պատրաստված է քսուքի ձևով:

Ընդլայնվում է այրվածքների բուժման դեղագործական բաղադրանյութերի տեսականին, ստացվում է այրվածքների բուժման դեղամիջոց, որն ունի արտահայտված կլինիկական արդյունք և ֆունկցիոնալ հնարավորությունների լայն սպեկտր:

---

(51) **(2013.01)** (11) **2735** (13) **A**
B09B 3/00
(21) **AM20120107** (22) **20.07.2012**
(71) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Ռիտա Սուրենի Էմինյան (AM), Կարինե Վլադիմիրի Մայսուրյան (AM)
(72) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Ռիտա Սուրենի Էմինյան (AM), Կարինե Վլադիմիրի Մայսուրյան (AM)
(73) Բենիկ Նիկոլայի Հարությունյան, 0010, Երևան, Նալբանդյան 17, բն. 22 (AM), Ռիտա Սուրենի Էմինյան, 0033, Երևան, Սիամանթոյի 4, բն. 9 (AM), Կարինե Վլադիմիրի Մայսուրյան, 0051, Երևան, Գրիբոյեդովի 11, բն. 8 (AM)
(54) **Կերակրի աղի բնական հանքերից ստացված արտադրական աղանստվածքային թափոնների վերամշակման եղանակ (տարբերակներ)**
(57) Գյուտը վերաբերում է թափոնների վերամշակման եղանակին, մասնավորապես՝ կերակրի աղի բնական հանքերից ստացված արտադրական աղանստվածքային թափոնների վերամշակմանը:

Թափոնները ենթարկում են մեխանիկական մաքրման, որից հետո մաղում են, չորացնում և մանրացնում: Մեխանիկական մաքրման ենթարկված թափոնները մաղում են 0,2-0,3մմ տրամագծով անցքեր ունեցող մաղով, չորացումն իրականացնում են բնական եղանակով՝ 2-3 օրվա ընթացքում՝ մեկընդմեջ խառնելով մինչև զանգվածի 45-50% խոնավության հասնելը:

Ըստ եղանակի մյուս տարբերակի՝ չորացումն իրականացնում են 80-90°C ջերմաստիճանում՝ 5-6 ժամվա ընթացքում՝ մինչև զանգվածի 20-25% խոնավության հասնելը:

Աղանստվածքային թափոնները Հայաստանի Հանրապետության Ավանի աղի հանքավայրի հանքանյութի մշակման արդյունքում առաջացած թափոններն են:

Ապահովվում է շրջակա միջավայրի պահպանումը աղանստվածքային թափոններով աղտոտումից:

---

(51) **(2013.01)** (11) **2736** (13) **A**
B65G 33/00
(21) **AM20120062** (22) **16.04.2012**
(71) Արմեն Սեդրակի Վարդանյան (AM), Էդուարդ Վանիկի Հովսեփյան (AM), Վլադիմիր Հարությունի Հարությունյան (RU)
(72) Արմեն Սեդրակի Վարդանյան (AM)
(73) Արմեն Սեդրակի Վարդանյան, 0012, Երևան, Սունդուկյան 23, բն. 52 (AM), Էդուարդ Վանիկի Հովսեփյան, 0012, Երևան, Սունդուկյան 64ա, բն. 3 (AM), Վլադիմիր Հարությունի Հարությունյան, Մոսկվա, Դովժենկոյի 12, մասնաշենք 1, բն. 79 (RU)
(54) **Գրավիտացիոն փոխակրիչ**
(57) Գյուտը վերաբերում է արդյունաբերության մեջ կիրառվող տրանսպորտային միջոցներին, մասնավորապես՝ գրավիտացիոն փոխակրիչներին:

Գրավիտացիոն փոխակրիչն ունի մուտք ու ելք և դրանք իրար միացնող ուղղաձիգ առանցքի շուրջը տեղակայված բազմագալար ժապավեն: Ժապավենն իրականացված է երկաթբետոնե մակերևույթի տեսքով, որի յուրաքանչյուր գալարն ունի քառակուսու տեսք և որի երկայնքով նախապես որոշված հետագծով տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված են սայլակներ ու նրանցից տարանջատված կախովի մանիպուլյատորներ: Յուրաքանչյուր մանիպուլյատորի տեղաշարժման հետագիծը որոշվում է ժապավենի ստորին մակերևույթին ամրակցված ուղղորդիչով: Սայլակների տեղաշարժման հետագիծը որոշվում է ժապավենի վերին մակերևույթի վրա ամրակցված ուղղորդիչով: Ժապավենի երկայնքով տեղակայված են տեխնոլոգիական կայաններ, որոնց նկատմամբ սայլակների և մանիպուլյատորների տեղաշարժն ու կայանումը կարգավորվում են մագնիսաօպտիկական ծրագրավորվող համակարգով:

Ապահովվում է փոխակրիչի ժապավենի վրայով տեղաշարժվող բեռի նկատմամբ տեխնոլոգիական գործընթացներով պայմանավորված գործողություններ կատարելու հնարավորությունը, 7 նկ.:

---

(51) **(2013.01)** **C23C 14/00**
C30B 23/00
B23B 33/00
(11) **2737** (13) **A**
(21) **AM20120172** (22) **26.11.2012**
(71) «ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(72) Արմեն Կուզանյան (AM), Աստղիկ Կուզանյան (AM), Վահագն Պետրոսյան (AM)
(73) ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
(54) **Բարակ թաղանթների ստացման համակարգ**
(57) Գյուտը վերաբերում է նյութագիտության բնագավառին և կարող է կիրառվել օպտիկական սարքաշինության մեջ, միկրոէլեկտրոնիկայում և բարձր տեխնոլոգիաների ուրիշ ոլորտներում լազերային փոշենստեցման եղանակով բարակ թաղանթների ստացման համար:

Բարակ թաղանթների ստացման համակարգ, որն ունի վակուումային խցիկ, խցիկում տեղադրված պտտվող թիրախ և պտտվող տակդիր, վակուումային խցիկից դուրս գտնվող լազեր: Համակարգը լրացուցիչ ունի լազերի և վակուումային խցիկի միջև տեղադրված լազերի փունջը լայնացնող ոսպնյակ և լազերի փունջը կիզակետող ոսպնյակ: Պտտվող թիրախի վրա ունի սեկտորի տեսք ունեցող դիմակ՝ ճեղքով, որն ապահովում է կիզակետի ստացումը, ընդ որում սեկտորի տեսք ունեցող կիզակետը համընկնում է շրջանաձև թիրախի մակերևույթի սեկտորի հետ:

Ապահովվում է թիրախի ծավալի լիովին օգտագործումը և պարզեցվում է կառուցվածքը, 2 նկ.:
(74) Ա. Պետրոսյան

---

(51) **(2013.01)** **F02B 37/00**
(11) **2738** (13) **A**
(21) **AM20120144** (22) **12.10.2012**
(71) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (AM)
(72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Վահե Ներսիկի Հակոբյան (AM), Կորյուն Սոկրատի Հայրապետյան (AM)
(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) **Ավտոմոբիլի տուրբաճնշակի յուղման համակարգ**
(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ տուրբաճնշակների յուղման համակարգերին:

Ավտոմոբիլի տուրբաճնշակի յուղման համակարգն ունի հիմնական պոմպ, էլեկտրական շարժաբերով օժանդակ պոմպ, օժանդակ պոմպի ելքին տեղադրված միակողմանի փական, ներքին այրման շարժիչի լիսեռի պտուտաթվերի տվիչ: Լրացուցիչ ունի տուրբաճնշակի իրանի վրա տեղադրված արագության սենսոր՝ իր տվիչով, ինչպես նաև կարգավորող բլոկ: Կարգավորող բլոկն ազդանշաններ է ընդունում վառքի գործարկչից, ժամանակի ռելեից, ներքին այրման շարժիչի լիսեռի պտուտաթվերի տվիչից և տուրբաճնշակի արագության սենսորի տվիչից և ազդանշան է հաղորդում օժանդակ պոմպի

էլեկտրական շարժաբերին: Հիմնական պոմպի ելքին տեղադրված է միակողմանի փական, իսկ օժանդակ պոմպի ելքին տեղակայված միակողմանի փականի մուտքին տեղադրված է յուղի զտիչ:

Ապահովվում է տուրբաճնշակի լիարժեք յուղումը, 2 նկ:

---

(51) **(2013.01)** (11) **2739** (13) **A**
H01M 10/00
(21) **AM20120151** (22) **29.10.2012**
(71) Հայկ Ռոբերտի Սիմոնյան (AM)
(72) Հայկ Ռոբերտի Սիմոնյան (AM)
(73) Հայկ Ռոբերտի Սիմոնյան, 0010, Երևան, Նալբանդյան 15 (AM)
(54) **Լարման քիմիական աղբյուրի պիտանիության աստիճանը որոշող սարք**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային:

Սարքն ունի մուտքային առաջին և երկրորդ սեղմակներ, փորձարկվող աղբյուրը լիցքաթափող տարր, որն իրականացված է տրանզիստորի տեսքով, վոլտմետր, ժամանակաչափ, հաստատուն լարման կառավարվող առաջին և երկրորդ աղբյուրներ, առաջին և երկրորդ դիֆերենցիալ ուժեղարարներ, լարման կոմպարատոր, RS-տրիգեր, հոսանքորոշող ճշգրիտ դիմադրություն, թողարկող կոճակ, կոճակային փոխանջատիչ և սպասող մուլտիվիբրատոր:

Լիցքաթափման հոսանքի բարձր կայունության և լիցքաթափման գործընթացի տևողության ճիշտ սևեռման շնորհիվ բարձրացվում է լարման քիմիական աղբյուրի պիտանիության աստիճանի որոշման օբյեկտիվությունը, ապահովվում է օգտագործման հարմարավետությունը, 1 նկ.:

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	*արտոնագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը* *U օգտակար մոդելի արտոնագիր*
21	*հայտի համարը*
22	*հայտի ներկայացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
31	*առաջին հայտի համարը*
32	*առաջին հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
45	*օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
51	*միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
54	*օգտակար մոդելի անվանումը*
56	*տեղեկատվության աղբյուրներ*
57	*օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
62	*ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
71	*հայտատուն, երկրի կոդը*
72	*օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը*
73	*արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*
85	*միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը*
86	*միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
87	*միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2013.01)** (11) **319** (13) **U**
A01D 34/00
(21) **AM20120066U** (22) **27.04.2012**
(71) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (AM)
(72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Նաիրա Վարդանի Յավրոյան (AM), Դավիթ Սարգսի Բադուրյան (AM)
(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) **Սեգմենտային կտրող ապարատի շարժաբերի ճոճվող հոդակապով մեխանիզմ**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի և խոտհնձիչ մեքենաների կտրող ապարատների շարժաբերներին:

Մեխանիզմն ունի շարժաբերի փոկային փոխանցումով տանող լիսեռ, դրա վրա համակենտրոն տեղակայված սկավառակ, սկավառակի վրա ապակենտրոն բնիկում տեղակայված շառավղային գնդառանցքակալ, գնդառանցքակալի ներքին օղակում իր մեկ ծայրով կոշտ ամրակցված շարժաթև, շարժաթևի մյուս ծայրին միակցված, հորիզոնական հարթության մեջ ճոճվող հոդակապային հանգույց, դրա հետ փոխազդող ուղղաձիգ տարվող լիսեռ, որի ծայրին միակցված է կտրող ապարատ: Գնդառանցքակալի արտաքին և դրա բնիկի ներքին մակերևույթները գնդային են: Գնդառանցքակալը տեղակայված է բնիկում՝ ազատ ճոճվելու հնարավորությամբ:

Պարզեցվում է մեխանիզմի կառուցվածքը, բարձրացվում է դրա աշխատանքի հուսալիությունը, 2 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

Արդյունաբերական նմուշներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի

11	*վկայագրի համարը*
13	*փաստաթղթի տեսակի կոդը* *S արդյունաբերական նմուշի վկայագիր*
21	*հայտի համարը*
22	*հայտի ստացման թվականը*
23	*ցուցահանդեսային առաջնության թվականը*
24	*գրանցման թվականը*
31	*առաջնային հայտի համարը*
32	*առաջնային հայտի ներկայացման թվականը*
33	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
51	*արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)*
54	*արդյունաբերական նմուշի անվանումը*
55	*արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)*
71	*հայտատուն(ները), երկրի կոդը*
72	*հեղինակը(ները), երկրի կոդը*
73	*իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը*
74	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **07-06** (11) **305** (13) **S**
(21) **20130001** (22) **10.01.2013**
(71) Լուսինե Կարապետյան (AM)
(72) Լուսինե Գրիգորի Կարապետյան (AM)
(73) Լուսինե Կարապետյան, Երևան, Բաղրամյան 56-20 (AM)
(54) **Գովազդային տակդիր բաժակի համար**
(55)



1.1



1.2

(51) **28-99** (11) **306** (13) **S**
(21) **20130002** (22) **04.02.2013**
(71) Անհատ ձեռնարկատեր Ալբերտ Միշայի Մադոյան (AM)
(72) Ալբերտ Միշայի Մադոյան (AM)
(73) Անհատ ձեռնարկատեր Ալբերտ Միշայի Մադոյան, Երևան, Կոմիտասի պող., 39 շ., բն. 67 (AM)
(54) **Ծխացող խունկ փայտի վրա**
(55)



1.1



1.2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի

111	*գրանցման հերթական համարը*
151	*գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)*
152	*թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է*
181	*գրանցման գործողության ենթադրյալ ավարտը*
210	*հայտի համարը*
220	*հայտի ներկայացման թվականը*
230	*ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը*
310	*առաջին հայտի համարը*
320	*կոնվենցիայով առաջնության թվականը*
330	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
442	*հայտի հրապարակման թվականը*
511	*ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը*
526	*չպահպանվող տարրեր*
540	*ապրանքային նշանը*
551	*կոլեկտիվ կամ հավաստագրային նշան*
554	*ծավալային նշան*
555	*հոլոգրաֆիական նշան*
556	*ձայնային նշան*
591	*գույնը և գունային համակցությունը*
646	*իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը*
730	*նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը*
740	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20120766** (111) **19640**
(220) **11.06.2012** (151) **29.03.2013**
(181) **11.06.2022**
(730) Ե.Ի. Դյու Փոն դե Նեմուր ընդ Քամփնի, Դելավերի նահանգ, US
(442) 06.09.2012
(540)

KOCIDE 2000

(511)
դաս 5. ֆունգիցիդներ գյուղատնտեսությունում օգտագործելու համար:
(740) Ան. Նահապետյան

---

(210) **20120767** (111) **19641**
(220) **11.06.2012** (151) **29.03.2013**
(181) **11.06.2022**
(730) Ե.Ի. Դյու Փոն դե Նեմուր ընդ Քամփնի, Դելավերի նահանգ, US
(442) 06.09.2012
(540)

ITERAL

(511)
դաս 5. ֆունգիցիդներ գյուղատնտեսությունում օգտագործելու համար:
(740) Ան. Նահապետյան

---

(210) **20120795** (111) **19642**
(220) **14.06.2012** (151) **29.03.2013**
(181) **14.06.2022**
(730) Ե.Ի. Դյու Փոն դե Նեմուր ընդ Քամփնի, Դելավերի նահանգ, US
(442) 06.09.2012
(540)

TANOS

(511)
դաս 5. հերբիցիդներ, ֆունգիցիդներ, միջատասպան միջոցներ:
(740) Ալ. Նահապետյան

---

(210) **20120830** (111) **19643**
(220) **21.06.2012** (151) **29.03.2013**
(181) **21.06.2022**
(730) «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ, 0001, Երևան, Հյուսիսային պող. 1, ԱՄ
(442) 08.10.2012
(540)



(511)
դաս 36. ապահովագրություն. ֆինանսական գործունեություն. դրամավարկային գործառնություններ. անշարժ գույքի հետ կապված գործառնություններ.
դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում.
դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում:
(740) Ա. Գալոյան

---

(210) **20120885** (111) **19644**
(220) **09.07.2012** (151) **29.03.2013**
(181) **09.07.2022**
(730) Ֆիգ Հոլդինգ Ս.Ա.Լ., LB
(442) 08.10.2012
(540)



(511)
դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:
(740) Ա. Գալոյան

---

(210) **20120945** (111) **19645**
(220) **20.07.2012** (151) **29.03.2013**
(181) **20.07.2022**
(730) Պոզնաննսկիե Զակլադի Չելյառսկե Խերբապոլ Ս. Ա., PL
(442) 03.08.2012
(540)

Неокапсидерм

Neocapsiderm

Նեոկապսիդերմ

(511)
դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. դիետիկ սնունդ և պատրաստուկներ բուժական նպատակների համար, սննդային հավելումներ բուժական նպատակների և առողջության պահպանման համար, հատուկ բժշկական նշանակության սնունդ, բուժական խոտաբույսեր, պատրաստուկներ դեղագործական նպատակների համար, դեղագործական նյութեր:
(740) Մ. Մխիթարյան

---

(210) **20120959** (111) **19646**
(220) **21.07.2012** (151) **29.03.2013**
(181) **21.07.2022**
(730) Ֆիլիփ Մորիս Փրոդաքթս Ս.Ա., CH
(442) 08.10.2012

(540)



(526) «L&M» և «MOTION» գրառումներից բացի մնացած բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:
(591) Նշանը պահպանվում է բաց և մուգ կապույտ, սպիտակ, արծաթամոխրագույն և կարմիր գունային համակցությամբ:
(511)
դաս 34. չմշակված կամ մշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք, այդ թվում՝ սիգարներ, սիգարետներ, սիգարիլներ, ծխախոտ սեփական սիգարետները փաթաթելու համար, ծխախոտ ծխամորճով ծխելու համար, ծամելու ծխախոտ, հոտ քաշելու ծխախոտ, կրետեկ. սնուս. ծխախոտի փոխարինիչներ (ոչ բժշկական նպատակներով օգտագործելու համար). ծխելու պիտույքներ, այդ թվում՝ սիգարետի թուղթ և ծխափողեր, սիգարետի զտիչներ, մետաղական տուփեր ծխախոտի համար, սիգարետի տուփեր և մոխրամաններ, ծխամորճեր, գրպանի հարմարանքներ սիգարետները փաթաթելու համար, վառիչներ. լուցկի:
(740) Ալ. Նահապետյան

---

(210) **20120982** (111) **19647**
(220) **25.07.2012** (151) **29.03.2013**
(181) **25.07.2022**
(730) «Ամվիլաբ» ՍՊԸ, US
(442) 17.10.2012

(540)

КЕПЛЕР

(591) Նշանը պահպանվում է կապույտ գույնով:
(511)

դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ սնունդ և նյութեր բուժական կամ անասնաբուժական նպատակների համար, դիետիկ հավելումներ մարդկանց և կենդանիների համար. մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ:

---

(210) **20120990** (111) **19648**
(220) **26.07.2012** (151) **29.03.2013**
(181) **26.07.2022**
(730) Ջոնսն ընդ Ջոնսն, Նյու Ջերսիի նահանգ, US
(442) 06.09.2012
(540)

ОЛИЗИЛ

(511)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ մարդկանց համար՝ քաղցկեղի, ցավի, կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների և խանգարումների, ՄԻԱՎ-վարակների, հեպատիտի և վարակիչ հիվանդությունների բուժման համար (բացառությամբ սրտանոթային պատրաստուկների):
(740) Ան. Նահապետյան

---

(210) **20120991** (111) **19649**
(220) **26.07.2012** (151) **29.03.2013**
(181) **26.07.2022**
(730) Ջոնսն ընդ Ջոնսն, Նյու Ջերսիի նահանգ, US
(442) 06.09.2012
(540)

ОЛИСИЛ

(511)

դաս 5. դեղագործական պատրաստուկներ մարդկանց համար քաղցկեղի, ցավի, կենտրոնական նյարդային համակարգի հիվանդությունների և խանգարումների, ՄԻԱՎ-վարակների, հեպատիտի և վարակիչ հիվանդությունների բուժման համար (բացառությամբ սրտանոթային պատրաստուկների):
(740) Ան. Նահապետյան

---

(210) **20121080** (111) **19650**
(220) **09.08.2012** (151) **29.03.2013**
(181) **09.08.2022**
(730) Օբշչեստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Վեստ Գրուպ», RU
(442) 05.11.2012
(540)

РУССКАЯ ТАЙГА

(511)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):
(740) Զ. Մանուկյան

---

(210) **20121131** (111) **19651**
(220) **21.08.2012** (151) **29.03.2013**
(181) **21.08.2022**
(730) Նիսան Ջիդոշա Կաբուշիկի Կաիշա (Նիսան Մոթոր Քո., ԼԹԴ), JP
(442) 07.12.2012
(310) 2012015938 (320) 02.03.2012 (330) JP
2012015939 02.03.2012 JP
2012015940 02.03.2012 JP
(540)

DATSUN

(591) Նշանը պահպանվում է սև, սպիտակ, բաց և մուգ մոխրագույն գունային համակցությամբ:

(511)

դաս 12. նավեր, նավակներ և մասեր ու կցամասեր դրանց համար. ավտոմոբիլներ, Էլեկտրաշարժիչավոր միջոցներ, ներառյալ՝ Էլեկտրաշարժիչավոր ավտոմոբիլներ, վագոններ, բեռնատար ավտոմոբիլներ, ֆուրգոններ, սպորտային տրանսպորտային միջոցներ, ավտոբուսներ, տրանսպորտային միջոցներ հանգստի համար, սպորտային ավտոմոբիլներ, մրցարշավային ավտոմոբիլներ, բեռնատար ավտոմոբիլներ, ավտոբեռնիչներ, ամբարձիչով (վերհանով) սայլակներ, քարշակներ (տրակտորներ), և կոնստրուկտիվ մասեր և կցամասեր դրանց համար. երկանիվ տրանսպորտային միջոցներ, հեծանիվներ և մասեր ու կցամասեր դրանց համար. սայլակներ. տրակտորներ. շոգեշարժեր. շարժիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. սռնիներ տրանսպորտային միջոցների համար. մեխանիկական և ատամնավոր փոխանցիչներ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. կախոցներ ավտոմոբիլների համար. կախոցների մեղմիչներ. արգելակներ տրանսպորտային միջոցների համար. փոփոխական հոսանքի շարժիչներ (հաստատուն հոսանքի շարժիչներ) ցամաքային տրանսպորտային միջոցների համար. հակահափշտակիչ ազդասարքեր ցամաքային տրանսպորտային միջոցների համար. ինքնաասոնձվող մակադրակներ դողերի կամ դողերի օդախցիկների նորոգման համար.

դաս 37. ավտոմոբիլների. էլեկտրաշարժիչավոր միջոցների, ներառյալ՝ էլեկտրաշարժիչավոր ավտոմոբիլների, վագոնների, բեռնատար ավտոմոբիլների, ֆուրգոնների, սպորտային տրանսպորտային միջոցների, ավտոբուսների, հանգստի համար տրանսպորտային միջոցների, սպորտային ավտոմոբիլների, մրցարշավային ավտոմոբիլների, բեռնատար ավտոմոբիլների, ժանիավոր բռնիչով ավտոբեռնիչների, քարշակների (տրակտորների), դրանց համար կոնստրուկտիվ մասերի և կցամասերի վերանորոգում և տեխնիկական սպասարկում. ավտոմոբիլների, էլեկտրաշարժիչավոր միջոցների, ներառյալ՝ էլեկտրաշարժիչավոր ավտոմոբիլների, վագոնների, բեռնատար ավտոմոբիլների, ֆուրգոնների, սպորտային տրանսպորտային միջոցների, ավտոբուսների, հանգստի համար տրանսպորտային միջոցների, սպորտային ավտոմոբիլների, մրցարշավային ավտոմոբիլների, բեռնատար ավտոմոբիլների, ժանիավոր բռնիչով ավտոբեռնիչների, և բուքսիրային քարշակների (տրակտորների), դրանց համար կոնստրուկտիվ մասերի և կցամասերի վերանորոգման ու տեխնիկական սպասարկման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. չափիչ կամ փորձարկման մեքենաների և գործիքների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. էներգիայի բաշխման կամ վերահսկման մեքենաների և ապարատուրայի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. պտտվող կերպափոխիչների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. փուլակոմպենսատորների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում, լիցքային սարքերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. կուտակչային մարտկոցների և մարտկոցների տարրերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. ներքին այրման շարժիչների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. ներքին այրման շարժիչների մասերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. շարժիչների մեկնասարքերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում՝ ոչ ցամաքային տրանսպորտային միջոցների համար. փոփոխական հոսանքի շարժիչների և հաստատուն հոսանքի շարժիչների մասերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. փոփոխական հոսանքի գեներատորների և հաստատուն հոսանքի գեներատորների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. հոսանքի գեներատորների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. էլեկտրական հաղորդալարերի կամ մալուխների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. հեռակապի ապարատուրայի և սարքերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. հեռախոսային ապարատների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. հեռակապի մեքենաների և ապարատուրայի մասերի ու պարագաների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. տրանսպորտային միջոցների համար տելեմատիկ ապարատների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում.

լիցքավորման ավարտի մասին ավտոմատ ծանուցման ապարատների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. ավտոմոբիլային նավագնացական համակարգերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. էլեկտրոնային մեքենաների, ապարատուրայի ու նրանց մասերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. անձնական համակարգիչների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. հեռակառավարման համակարգերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. էլեկտրոդների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. մագնիսական միջուկների վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում. ռեոստատային հաղորդալարերի վերանորոգում կամ տեխնիկական սպասարկում:

(740) Ա. Գալոյան

---

(210) **20121216** (111) **19652**
(220) **31.08.2012** (151) **29.03.2013**
(181) **31.08.2022**
(730) «Շառկավտո» ՍՊԸ, գ. Պռոշյան, Չաուշի 10/7, ԱՄ
(442) 19.09.2012
(540)



(591) Նշանը պահպանվում է կապույտ, կարմիր, սև, սպիտակ գունային համակցությամբ:
(511)
դաս 35. առևտուր (ավտոպահեստամասերի վաճառք):

---

(210) **20121221** (111) **19653**
(220) **03.09.2012** (151) **29 .03.2013**
(181) **03.09.2022**
(730) «Վահան ԵՀԱ» ՍՊԸ, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Սոթք, ԱՄ
(442) 19.09.2012
(540)



(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, մուգ և բաց շագանակագույն գունային համակցությամբ:
(511)
դաս 37. հորատման աշխատանքներ:

---

(210) **20121243** (111) **19654**
(220) **07.09.2012** (151) **29.03.2013**
(181) **07.09.2022**
(730) «Միլլ Ինդասթրիզ» ՍՊԸ, 0037, Բաբայան 10/1, ԱՄ
(442) 19.09.2012
(540)



(511)
դաս 6. սովորական մետաղներ և դրանց համահալվածքներ. մետաղյա շինանյութեր. շարժական մետաղյա կառուցվածքներ և շինություններ. մետաղյա նյութեր ռելսուղիների համար. մետաղյա ճոպաններ և լարեր. մետաղակապեր և փականքային իրեր. մետաղյա խողովակներ. անկիզելի պահարաններ. սովորական մետաղներից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. հանքանյութեր.
դաս 19. ոչ մետաղյա շինանյութեր. ոչ մետաղյա կոշտ խողովակներ շինարարական նպատակների համար. ասֆալտ, խեժեր և բիտում. ոչ մետաղյա շարժական կառուցվածքներ և շինություններ. ոչ մետաղյա հուշարձաններ:

---

(210) **20121275** (111) **19655**
(220) **12.09.2012** (151) **29.03.2013**
(181) **12.09.2022**
(730) Էմիլիո Պուչի Ինտերնացիոնալ Բի.Վի, NL
(442) 08.10.2012
(540)

EMILIO PUCCI

(511)

դաս 3. օծանելիք, անուշաբույր ջուր, օդեկոլոն, անձնական օգտագործման օճառներ, եթերային յուղեր կոսմետիկ նպատակների համար, դեզոդորանտներ անձնական օգտագործման համար, կոսմետիկական միջոցներ, կոսմետիկ ժելեր և կոսմետիկ պատրաստուկներ լոգանքի և ցնցուղի համար, կոսմետիկ քսուքներ և լոսյոններ մազերի, դեմքի և մարմնի համար, շամպուններ, սափրվելու պատրաստուկներ, սափրվելուց հետո լոսյոններ, բալասաններ և ժելեր.

դաս 9. ակնոցներ, արևային ակնոցներ և ակնոցների պատյաններ.

դաս 14. ոսկերչական իրեր, մասնավորապես՝ ականջօղեր, ճարմանդներ, ապարանջաններ, զարդասեղներ, մանյակներ, կախազարդեր, մատանիներ, օղակներ բանալիների համար, ժամացույցներ, թևնոցներ ժամացույցների համար և պատյաններ ժամացույցների համար.

դաս 35. հագուստի, կոշկեղենի, գլխարկների, կաշվե հագուստի, ակնոցների, ոսկերչական իրերի, ժամացույցների և ճամպրուկների մանրածախ առևտրի ծառայություններ և ինտերնետային մանրածախ առևտրի ծառայություններ, ապրանքների (հագուստի, կոշկեղենի, գլխարկների, կաշվե հագուստի, ակնոցների, ոսկերչական իրերի, ժամացույցների և ճամպրուկների) ներկայացում բոլոր տեսակի մեդիա միջոցներով մանրածախ առևտրի նպատակով:

(740) Զ. Մանուկյան

---

(210) **20121276** (111) **19656**
(220) **12.09.2012** (151) **29.03.2013**
(181) **12.09.2022**
(730) Էմիլիո Պուչի Ինտերնացիոնալ Բի.Վի, NL
(442) 08.10.2012
(310) 2012C000546 (320) 11.04.2012 (330) IT
(540)

PUCCI

(511)

դաս 3. օծանելիք, անուշաբույր ջուր, օդեկոլոն, անձնական օգտագործման օճառներ, եթերային յուղեր կոսմետիկ նպատակների համար, դեզոդորանտներ անձնական օգտագործման համար, կոսմետիկական միջոցներ, կոսմետիկ ժելեր և կոսմետիկ պատրաստուկներ լոգանքի և ցնցուղի համար, կոսմետիկ քսուքներ և լոսյոններ մազերի, դեմքի և մարմնի համար, շամպուններ, սափրվելու պատրաստուկներ, սափրվելուց հետո լոսյոններ, բալասաններ և ժելեր.

դաս 9. ակնոցներ, արևային ակնոցներ և ակնոցների պատյաններ.

դաս 14. ոսկերչական իրեր, մասնավորապես՝ ականջօղեր, ճարմանդներ, ապարանջաններ, զարդասեղներ, մանյակներ, կախազարդեր, մատանիներ, օղակներ բանալիների համար, ժամացույցներ, թևնոցներ ժամացույցների համար և պատյաններ ժամացույցների համար.

դաս 18. կաշվից կամ կաշվի նմանակումներից արկղեր, ճամփորդական պայուսակներ, ճամփորդական լրակազմեր (կաշվից), թիկնապայուսակներ, ճամփորդական նպատակներով հագուստի պայուսակներ, կոսմետիկ պարագաների համար պայուսակներ (դատարկ), թիկնապայուսակներ, ձեռքի պայուսակներ, կաշվից պատրաստված պայուսակներ փաստաթղթերի համար, դրամապանակներ, մանրադրամի քսակներ, բանալիների պատյաններ (կաշվից), անձրևանոցներ.

դաս 25. հագուստ և ներքնազգեստ, մասնավորապես՝ վերնաշապիկներ, սպորտային վերնաշապիկներ, պուլովերներ, կիսաշրջազգեստներ, զգեստներ, տաբատներ, վերարկուներ, շապիկներ, գոտիներ (հագուստ), շարֆեր, վզկապ շարֆիկներ, ձեռնոցներ, վզկապներ, գուլպաներ, կանացի ներքնազգեստ, լողազգեստներ, ննջազգեստներ, կոշկեղեն, գլխարկներ.

դաս 35. հագուստի, կոշկեղենի, գլխարկների, կաշվե հագուստի, ակնոցների, ոսկերչական իրերի, ժամացույցների և ճամպրուկների մանրածախ առևտրի ծառայություններ և ինտերնետային մանրածախ առևտրի ծառա-

յություններ, ապրանքների (հագուստի, կոշկեղենի, գլխարկների, կաշվե հագուստի, ակնոցների, ոսկերչական իրերի, ժամացույցների և ճամպրուկների) ներկայացում բոլոր տեսակի մեդիա միջոցներով մանրածախ առևտրի նպատակով :
(740) Զ. Մանուկյան

---

(210) **20121324** (111) **19657**
(220) **19.09.2012** (151) **29.03.2013**
(181) **19.09.2022**
(730) Ամերիքն Ինթրնեշնլ Գրուփ, Ինք., US
(442) 20.11.2012
(540)

AIG

(511)
դաս 36. ապահովագրություն, ֆինանսական գործառնություններ, դրամավարկային գործառնություններ, անշարժ գույքի գործառնություններ, ապահովագրության ծառայություններ՝ դժբախտ պատահարի, ինչպես նաև առողջության, ավտոմեքենաների և վերականգնման ենթակա (ռեկրեացիոն) տրանսպորտային միջոցների, ավիացիայի ոլորտում, գործարարության ընդհատման, գործարարության հակաճգնաժամային կառավարման, տնօրենների և աշխատակիցների պատասխանատվության, անաշխատունակության, աշխատակիցների նպաստների, աշխատակիցների գործունեության պատասխանատվության, բնապահպանական պատասխանատվության, սխալների և բացթողումների, միջոցառման դադարեցման, հավատարմության և հանցանքի, ֆիդուցիար պատասխանատվության (իր մասնագիտական ոլորտում գործունեություն ծավալող անձի կողմից ստանձնված պարտավորություն հօգուտ այլ անձի), խաբեբայության, ընդհանուր պատասխանատվության, հայրենիքի անվտանգության և ահաբեկչության, գողության բացահայտման, առևանգման և փրկագնման, կյանքի, հիփոթեքային երաշխիքի, ցանցային անվտանգության և գաղտնիության, ապրանքների պատասխանատվության, մասնագիտական պատասխանատվության, գույքի և վթարի, վերաապահովագրության, երաշխիքի, առևտրային վարկի և քաղաքական ռիսկի, ճանապարհորդության և աշխատողների փոխհատուցման ոլորտներում. ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայություններ. ապահովագրության տարեկան վճարում. տարեկան վճարումների տրամադրում և կառավարում. կենսաթոշակային ծրագրերի ֆինանսական կառավարում. ներդրումային խորհրդատվական ծառայություններ. ներդրումների կառավարում. փոխադարձ ֆոնդերի ներդրումներ. անշարժ գույքի հիփոթեքային վարկավորման ծառայություններ. անշարժ գույքի կառավարում (ներդրումային բանկային ծառայություններ). ապառիկ վարկերի ծառայություններ. ապահովագրական միջնորդի և գործակալությունների ծառայություններ՝ նախատեսված օգտագործվող օդանավերի ապահովագրության համար:
(740) Զ. Մանուկյան

---

(210) **20121325** (111) **19658**
(220) **19.09.2012** (151) **29.03.2013**
(181) **19.09.2022**
(730) Ամերիքն Ինթրնեշնլ Գրուփ, Ինք., US
(442) 20.11.2012
(540)

AIG

(511)
դաս 36. ապահովագրություն, ֆինանսական գործառնություններ, դրամավարկային գործառնություններ, անշարժ գույքի գործառնություններ, ապահովագրության ծառայություններ՝ դժբախտ պատահարների, ինչպես նաև առողջության, ավտոմեքենաների և վերականգնման ենթակա (ռեկրեացիոն) տրանսպորտային միջոցների, ավիացիայի ոլորտում, գործարարության ընդհատման, գործարարության հակաճգնաժամային կառավարման, տնօրենների և աշխատա-

կիցների պատասխանատվության, անաշխատունակության, աշխատակիցների նպաստների, աշխատակիցների գործունեության պատասխանատվության, բնապահպանական պատասխանատվության, սխալների և բացթողումների, միջոցառման դադարեցման, հավատարմության և հանցանքի, ֆիդուցիար պատասխանատվության (իր մասնագիտական ոլորտում գործունեություն ծավալող անձի կողմից ստանձնված պարտավորություն հօգուտ այլ անձի), խաբեբայության, ընդհանուր պատասխանատվության, հայրենիքի անվտանգության և ահաբեկչության, գողության բացահայտման, առևանգման և փրկագնման, կյանքի, հիփոթեքային երաշխիքի, ցանցային անվտանգության և գաղտնիության, ապրանքների պատասխանատվության, մասնագիտական պատասխանատվության, գույքի և վթարի, վերաապահովագրության, երաշխիքի, առևտրային վարկի և քաղաքական ռիսկի, ճանապարհորդության և աշխատողների փոխհատուցման ոլորտներում. ֆինանսական ռիսկերի կառավարման ծառայություններ. ապահովագրության տարեկան վճարում. տարեկան վճարումների տրամադրում և կառավարում. կենսաթոշակային ծրագրերի ֆինանսական կառավարում. ներդրումային խորհրդատվական ծառայություններ. ներդրումների կառավարում. փոխադարձ ֆոնդերի ներդրումներ. անշարժ գույքի հիփոթեքային վարկավորման ծառայություններ. անշարժ գույքի կառավարում (ներդրումային բանկային ծառայություններ). ապառիկ վարկերի ծառայություններ. ապահովագրական միջնորդի և գործակալությունների ծառայություններ՝ նախատեսված օգտագործվող օդանավերի ապահովագրության համար:
(740) Զ. Մանուկյան

---

(210) **20121333**
(220) **20.09.2012**
(111) **19659**
(151) **29.03.2013**
(181) **20.09.2022**
(730) Վմ. Ռիգլի Ջր. Քամփնի, Դելավերի նահանգ, US
(442) 20.11.2012
(540)



(591) Նշանը պահպանվում է սպիտակ, կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, կապույտ, երկնագույն, մանուշակագույն և սև գունային համակցությամբ:
(511)
դաս 30. քաղցրավենիք և հրուշակեղեն, կոնֆետներ, անանուխային քաղցրավենիք, դրաժեներ և պաստեղիկներ:
(740) Ալ. Նահապետյան

---

(210) **20121384**
(220) **10.10.2012**
(111) **19660**
(151) **29.03.2013**
(181) **10.10.2022**
(730) «Գլանժ ալկո» ՍՊԸ, Կոտայքի մարզ, գյուղ Արամուս, ԱՄ
(442) 17.10.2012
(540)

ՀԱՅԿԱՆ

HAYKAN

АЙКАН

(511)
դաս 33. հայկական կոնյակ (բրենդի):

---

(210) **20121410**
(220) **16.10.2012**
(111) **19661**
(151) **29.03.2013**
(181) **16.10.2022**
(730) «Շարմ հոլդինգ» ՍՊԸ, Երևան, Սիմոն Վրացյան 71, բն.7, ԱՄ
(442) 05.11.2012
(540)

BOMBASTIC

(511)
դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապա-

հովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

---

(210) **20121429** (111) **19662**
(220) **19.10.2012** (151) **29.03.2013**
(181) **19.10.2022**
(730) Մոնսուն Աքսեսորայզ Լիմիթիդ, GB
(442) 07.12.2012
(540)

MONSOON

(511)

դաս 3. օճառներ անձնական օգտագործման համար, շամպուններ, օծանելիք, հարդարանքի ջուր, օդեկոլոն, կոսմետիկական միջոցներ, հարդարանքի ոչ բուժական պատրաստուկներ մաշկի, մարմնի և գլխամաշկի վրա կիրառելու, մշակելու և խնամելու համար, միջոցներ մազերի հեռացման համար (դեպիլյատորներ). ոչ բուժական պատրաստուկներ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ. եթերային յուղեր, միջոցներ քրտնելու դեմ. պատրաստուկներ լոգանքի և ցնցուղի համար. յուղեր լոգանքի համար, աղեր լոգանքի համար, տալկ. արոմաթերապիայի յուղեր, հոտավետ նյութեր. շրթներկ, փայլ շուրթերի համար, բալզամ շուրթերի համար, մատիտ շուրթերի համար. արհեստական եղունգներ, միջոցներ և պատրաստուկներ եղունգները զարդարելու, մաքրելու, խնամելու և մշակելու համար.

դաս 9. գազով, կատալիզային այրումով կամ էլեկտրականությամբ աշխատող սարքեր մազերի խնամքի համար. սարքեր մազերի ծալքավորման, ուղղման, գանգրացման համար. վերոնշյալ սարքերի մասեր. էլեկտրական արդուկներ. կենցաղային կշեռքներ և մարդկանց կշռելու կշեռքներ. հաշվասարքեր, գրպանի հաշվասարքերի պատյաններ. էլեկտրական մալուխներ, էլեկտրական խրոցակներ, էլեկտրական փոխարկիչներ. վերոնշյալ ապրանքների մասեր. օպտիկական սարքեր ու գործիքներ. օպտիկական ապակիներ և ոսպնյակներ. օպտիկական ակնոցներ. արևապաշտպան ակնոցներ. շրջանակներ, ոսպնյակներ, պատյաններ, թոկեր և շղթաներ ակնոցների համար. հպաոսպնյակներ. շարժական հեռախոսների պատյաններ և ծածկոցներ. լուսանկարչական սարքեր ու գործիքներ. սարքեր ու գործիքներ ձայնի, տեսողական պատկերի և վիդեոյի ընդունման, հաղորդման, գրառման և վերարտադրման համար. համակարգիչներ. համակարգչային ծրագրեր և համակարգչային խաղեր. նախապես գրառված պարունակությամբ կամ դատարկ տեսաժապավեններ, CD-ներ, DVD-ներ, ձայներիզներ և ժապավեններ, հիշողության չիփեր և USB ֆլեշ-հիշողություններ.

դաս 14. ոսկերչական իրեր, զարդեր և բիժուտերիա. ականջօղեր, մանյակներ, ապարանջաններ, ոտքի կոճի շղթաներ, մետաղազարդեր, մատանիներ, թանկարժեք քարեր, ժամացույցներ. բյուրեղիկներ բոդի-արտի համար. ոսկերչական իրեր և զարդեր մարմնի համար. ոսկերչական իրեր և զարդեր մարմնի համար պատրաստված բյուրեղիկներից. դաջվածքներ բյուրեղիկներից. ազնիվ մետաղներ և դրանց համահալվածքներ և ազնիվ մետաղներից պատրաստված կամ դրանցով պատված ապրանքներ. մասեր և պիտույքներ բոլոր վերոնշյալ ապրանքների համար.

դաս 18. պայուսակներ, մեծ պայուսակներ, կանանց պայուսակներ, ուսապայուսակներ, տնտեսական պայուսակներ, սպորտային պայուսակներ, գույքապարկեր, գոտի-դրամապանակներ. պայուսակներ և պատյաններ նորածինների, երեխաների, մանուկների և հղի մայրերի համար՝ իրեր կրելու նպատակով. պայուսակներ կոսմետիկական միջոցների համար, ճամպրուկներ, պորտպլեդներ, թիկնապայուսակներ, կոնապայուսակներ, ճամփորդական պայուսակներ, պորտֆելներ, ուղեպայուսակներ. դրամապանակներ, քսակներ, կրեդիտ քարտերի պատյաններ. կաշվից կամ կաշվի նմանակումներից պատրաստված իրեր. հովանոցներ և անձրևակալներ. հագուստ շների, կատուների համար, պարանոցակապեր, քուղեր, պայուսակներ և ծածկոցներ շների և կատուների համար.

դաս 20. կահույք. հայելիներ, շրջանակներ նկարների համար, հայտարարությունների տախտակներ և հայտարարությունների սարքեր. պահարաններ, արկղեր, մահճակալներ և բազ-

մոցներ, պատատախտակներ, շիրմաներ, դարակներ, դրոցներ և հենարաններ, քնապարկեր, տափակ զամբյուղներ, սեղաններ, աթոռներ, պահոցներ, ֆուրնիտուր խանութների համար, կեռիկներ և բռնակներ, դեկորատիվ իրեր և ափսեների տեսքով զարդարանքներ.

դաս 21. տնային և խոհանոցային կահկարասի և սպասք. ապակյա իրեր. հախճապակյա և ճենապակյա իրեր, սեղանի պարագաներ. եփելու սպասք, սափորներ, կժեր, թավաներ և տարողություններ. ամաններ նախատեսված վառարանում օգտագործելու համար. գրիլներ, գրիլ եփելու հարմարանքներ. ձեռքով կառավարվող ոչ էլեկտրական խառնիչներ, ծփիչներ, բլենդերներ և հարմարանքներ աղալու համար. ոչ էլեկտրական զտիչներ սուրճի համար, սրճաղացներ, քամիչներ սուրճի համար և սրճեփներ, սրճամաններ. թեյամաններ, թեյը թրմելու գնդիկներ և թեյաքամիչներ. հաց կտրատելու տախտակներ, հարմարանքներ 22եր և պահածոներ բացելու համար. խցանահաններ և ջրամաններ. դյուրակիր սառցապահարաններ, դույլեր սառույցի համար և գինին սառեցնելու հարմարանքներ. ոչ էլեկտրական հյութամզիչներ. սխտորքամիչներ. խոհարարական կաղապարներ, ձվի զատիչներ, մաղեր և քամիչներ. քափկիրներ, թխելու սպասք, սիֆոններ գազավորված ջրի համար. պաղպաղակ պատրաստելու ոչ էլեկտրական հարմարանքներ. չորուցիչներ և չորացնելու տախտակներ. սկուտեղներ, անոթներ խմելու համար, գավաթներ, ճաշամաններ, ափսեներ, կճուճներ, պուտուկներ, 22եր, սրվակներ, պահպանման անոթներ, փոքրիկ ամաններ քացախի, յուղի համար, թերմոսներ, ջերմամեկուսիչ տարողություններ սննդամթերքի և ըմպելիքների համար, բուտերբրոդների ամաններ, պիտոյատուփեր և պայուսակներ զբոսախնջույքների համար. վազաներ, դեկորատիվ իրեր և զարդարանքի օբյեկտներ. մոմակալներ և աշտանակներ. կենցաղային զամբյուղներ, աղբարկղեր. խոզանակներ, սանրեր, գոգաթիակներ և հատակմաքրիչներ. հարթամամլիչներ տաբատների համար և ատամի խոզանակներ.

դաս 25. հագուստ, գլխարկներ, փողկապներ, օձիքներ, լողազգեստ, լողափի զգեստներ, գիշերային հագուստ, սպիտակեղեն, ներքնազգեստ, կանանց ներքնազգեստ, սպորտային հագուստ, անձրևային հագուստ, կոշիկներ, կիսակոշիկներ, ճտքավոր կոշիկներ, փափուկ մարզակոշիկներ, ձեռնոցներ, թիկնոցներ, թաթմաններ, շարֆեր, գլխի ծածկոցներ, կեպիներ, տրիկոտաժային գուլպաներ, շալեր, պոնչոներ, բանդանաներ և գոտիներ.

դաս 26. դեկորատիվ իրեր մազերի համար, պարագաներ մազերի համար, վարսակալներ, սեղմիչներ մազերի համար, ժապավեններ մազերի համար, երիզակներ, ժապավեններ, ժանյակներ, ասեղնագործ իրեր և կոճակ-խորհրդանշաններ. կոճակներ. կեռիկներ և մերակներ. գնդասեղներ և ասեղներ, արհեստական ծաղիկներ.

